


Սի կողմից Զարդախլուի վերայ, միւս կողմից Բագային վերայ կատարուող յարձակումներն այդ օրն այնքան վախեցրին Ֆրէզէկայի ռուս ընակիչներին, որ նրանք սահմանակայի պրիուտաւին տանել նրանց Սլավանկա: Պրիստաւն էլ, ամբողջ գեւզը, բայց տղամարդկանցից, միանդամից տեղափոխեց Սլավանկայ: Այս հանգամանքից սահմանակայի թուրով քահանան իւր ընկերներով նրան օրը գնաց գեշերելու Զարդախլու:

Զարդախլուից Գանձակ գնալն երկիւզալի դարձաւ, փոստն էլ խանդարուած էր. այն ինչ Բագայի խնդիրը մնում էր անշարժ, ուստի այդ խնդիրը, Զարդախլուի տանուաէրի վեկուցումը գաւառապետին գեւզի պաշարուած վիճակի մասին և Մեսրոքահանացի մի նամակը Բագայի վիճակի մասին յաջորդ Կորիւն վարդապետի վերայ՝ յանձնուեցին մի ռուս սարամնիկի, որ տանի հասցնի Գանձակ քսան և հինգ ռուբլի վարդատրութեամբ նոյեմբերի 23 ին, չորեքշաբթի Բագայից Զարդախլու հառանգետոս Խաչատրեանը և Վուկան Պօղոսեանը, որ նախ Զարդախլուից օգնութիւն խնդրեն և երկրորդ՝ խնդրատրուների վիճակից աեղեկանան: Հասկանալի է, որ Զարդախլուն, ինքը շրջապատուած լինելով թուրք խուժանով, չէր կարող օդնութեան ձեռք մեկնել Բագային: Ուրեմն գեսալանները ձեռնունայն վերադարձան:

Քաջբերունի.

Կը շարունակուի



Պրոֆ. Ն. Մատի թուղթը Անիում հնագիտական ինսիտուտ
հիմնելու համար:

Առվկասի հպարտութիւնը՝ զարդարանքներն և գտնձեցնեն, որ պարզ են է նրան բնութիւնը: Գոցանից լուադոյների հետ հաւատար կրվկասը կարող է նուև հպարտանալ երկնքի մի այլ քաղաքու կըթական գանձով—Անիի աւերտակներով, այս էւր հնագիտական թագի մէջ ամենատեսք մարդարիտով:

Պահապանելով իւր անուան մէջ, Առվկասի կեանքի ամենաշին շրջանում ունեցած իւր գոյութեան անհերքելի վասառեր, շրջան, որ յաջարկեց արիական գաղթականութեան, աւելի ուշ շրջանում Անին անառիկ քերդ գարձած—Ճառայում էր իւրի յուսոյ կայարան նշանաւոր աւատական ցեղի կամոարական եշտաների, որ աղդական էին Արշակունիներին:

Ապա անցնելով մի ուրիշ իշխանական տան, աւելի ազգեցիկ և քաղաքական—ստեղծագովծող, Անին—քիչ յիսոյ քաղաք—գարձաւ մայրաքաղաք Բագրատունեաց թագաւորութեան. վերջինը ժամանակաւորապէս բռնեց Տիգրանների և Արշակունեաց թագաւորութեան տեղը:

Ծաղկեալ քաղաքը օգտառ ում էր կեանքի այնպիսի յարմարութիւններով, ինչպէս փառաւոր ճանապարհները, բազմաթիւ կամուրջները և ջրանցքները. Անին շարունակում էր ծաղկել նաև օտարազգի կառավարիչների ձեռքի տակ. նոցա տիրապետութեան շրջանում, XII—XIII դարերում, քաղաքը իւր ծաղկման ամենաբարձր կէտին հաստաւ, իսկ յետոյ յանկարծակի դատարկուեց և համարեա հինգ դար շարունակ կատարելապէս մուտացութեան մէջ մնաց:

Աչինչ, եթէ մինչև այժմ չապացուցուեց առասպելը քաղաքի երկրաժարժից կործանուելու մասին: Որ մի զօրեղ կատաստրոֆա տեղի է ունեցել, այդ անկասկած է, որի չնօրհիւ բահի իւրաքանչիւր հարուածը Անիում բանում է նոր նիւթ, երբէմն ամբողջ մանրամասնութիւն, միշտ մի կտոր, կամ միքանիսը, մի շարք դարերի արտաքին և ներքին կեանքը քաղաքի վերականգնելու համար: Անի քաղաքը նշանաւոր է ոչ միայն ինքն ըստ ինքեան այլ և ինչպէս տիպիքական ներկայացուցիչ առաջաւոր Ասիայի միջնագարեան քաղաքների, որ ամենից լաւ ամբողջովին վերականգնելի է:

Հին ժամանակներից սկսած Անիում և նրա շրջակայքում պահպանուել են Եկուակի ամբողջ գաւառում ցրուած բազմաթիւ գերեզմաններ: Այդ կամ աւելի հին շրջանից մեզ հասել են սեպագիր արձանադրութիւններ, որոնք գտնուած են. Եկուակի գանազան մասերում.

Քրիստոնէութեան առաջին դարերին են վերաբերում, թէե գեռ եռ առողական ազգեցութեան տակ, այնպիսի հազուագիւտ հնագոյն յիշատակարաններ, ինչպէս Անիի միջնաբերդի եկեղեցին, իսկ Անիից գուշու—15 դար շարունակ գոյս թիւն ունեցող Բաղելիքը Երերուցքի, Ագարակի և տաճարը Տիգոսի:

Ցոյն բիւզանդական ազգեցութիւնը, որ քրիստոնէական առաջին տարիի քարոզիչների ազգեցութեան տեղը բռնեց, զրոշմուած է այնպիսի բնորոշ ձեռակերտների վերայ, ինչպէս Բագրատունաց տաճարը, Մթէնի տաճարը և հնագիտական աեռուկէտից Կամաւրական իշխանների թանկագին հանգստավանը՝ ալիսիշնեան գիւղում, բոլոր այս յիշատակարանները իրենց վերաց կրում են VII-րդ դարի արձանագրութիւններ:

Անին բովանգակում է իւր մէջ բազմաթիւ յիշատակարաններ Բադրատութեաց թագաւորութիւնից, լսառը մահմեդական շրջանի ազգեցութեան գեղեցիկ շինութիւններով: Անին,—այն երջանինի քաղաքն է, որտեղ պահպանուել են, մի քանի դար շարունակ խաղաղ, ստեղծագործող համարնակութեան իրական վկաները առաջաւոր Առիայի քաղականիրթերեք ազգերի՝ Հայերի, Վրացիների և Պարսիկների, որի չնորհիւ առատ ազբեւրներ ունի նա ընդհանրապէս արևելեան հաղուագիւտ յիշատակարանների քրիստոնէականի հետ և մահմեդական իրանական ազգեցութեան զրոշմով, յայտնի հետքերով իրանո—մահմեդական մանրամասնութեան ազգեցութեան զարգացման տեղական շինուածքների ձևերի վերայ կամ նոր իրանո—մահմեդական զարգարանքների ձևերի և հին քրիստոնէականների հետ միացման հետաքրքիր օրինակներով:

Այս ըոլոսը վերին աստիճանի հրապուրիչ լինելով հետախուզուզողի համար, ինքն է առաջ կոչում այս թանկագին յիշատակարանների հոկողութեան խիստ կարեւորութիւնը, եթէ անկարելի է հենց այժմ անպահովել նոցա ուղիղ ուսումնասիրութիւնը:

Միանոյն ժամանակ անհերքելի փաստ է Առևուաստանում դէպի հնագիտութիւնը զարթնած հետաքրքրութեան աճումն, հնագիտական պարապմունքների ուժեղացումն համալսարաններում և հնագիտական ընկերութիւնների գործունէութեան ընդունակումն: Բայց այսօր—վաղը ուռւսած հնագիտութեան ընական զարգացմամբ հարց կդրուի հին հայաստանի այնպիսի քաղաքների պեղումների մասին, ինչպէս են՝ Արմաւեր, Արտաշմտ, Վաղարշապատ, Դուրին ևն, որոնք հետաքրքիր են ոչ միայն արեելագէտների համար այլ և բիւզանդական շրջանն ուսումնասիրուների և կլասսիկների համար: Կայսերական սուսաց հնագիտական ընկերութեան կլաստիկ բաժանմունքը, որ յանձնէ առել Դառնիի հետազոտումն և նրա մէջ գտնուած հին տաճարի պեղումն, գուցէ, հիմք կդնէ հին Հայաստանի այս նոր դարաշրջանի հնագիտութեան հետազօտութեան պատմութեան մէջ: Եւ այս գէպքում օգնութեան կարեք կլինի Անիին Ոնիկաւեռը չել լինիլ, գուցէ, և յատկապէս աելինիքական օգնութիւնը Անիին հրահանգուած բանւորներով, պեղման համար գործեքներով, աւագրեայի անհրաժեշտ դրականութեամբ և հնարաւորութեամբ աւելի դաժան, վատառողջ օրերին պատշպանութիւն գտնելու դիտապէս մշտիկուած, առողջ Անիումն:

Բայց կայ աւելի էտկան և քիչ վեճելի բան Առևուաստա-

ովութիւնը Շիրակի հնութեանց Անիի հետ միասին կլինի, և մասսամբ է աստիճանաբար ամելաւ յատկապէս նախագուռն աւելի հին և աւելի բարդ հնագիտական հետազոտութեան համար վերոյիշեալ քաղաքներում, որոնք համարեայ ամբողջովին ծածկուած են կամ անհետք կորած:

Անկախ դրանից, շատ օգտակար կլինէր հւնց ոյժմ ունենալ Կովկասում մի քանի կամ, գոնեայ, սի կենդանի կազմակերպուած հնագիտական կէնտրոն, գրաւելով գէպ իրեն տեղական գիտական ոյժերը, նա միւնոյն ժամանակ կարող էր օգնութեան հասնել կենտրոնական հնագիտական ընկերութիւններին նահանակ այդ կենտրոնական հաստատութիւնների վերայ ույժից վեր հարցեր է բաժին ընկնում, և հեռաւորութեան ու տեղական հանդամանքների անձանօթութեան շնորհիւ նոքա ստիպուած են գիմել կողմնակի, շատ անդամ ոչ գիտակ անձանց:

Շիրակում, բացի Անիից, կայ երեք քաղաք ես, որոնք հնագիտական մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում, — Մըէն, Շիրակավան և Բագարան: Նոքա էլ հեթանոսական շրջանին են հասնում, բայց արիական: Սակայն չխօսելով այն բանի մասին որ այդ բոլոր քաղաքները Անիից կարճ կեանք են ունեցել, նրանցից և ոչ մէկում չենք գտնում Անիի անդնահատելիութիւնը: Հեռու խոշոր կենտրոններից, անընակ, անապատ, շրջապատուած համարեա ամեն կողմից ամուր, մասսամբ ընական մասամբ արհետական պարփակներով, Անին ապահովում է լիակատաք հնարաւորութիւն նալատակայարմաք կերպով հնութեանց պահպանման, լիակատաք հնարաւորութիւն պեղումների անարգել զարգացման, լիակատաք հնարաւորութիւն խաղաղ, գիտական աշխատանքի հէնց կենդանի հնութեանց մէջ և նրանց հետ անմիջական հաղորդութեան համար:

Զուգընթաց գիտական շարժման Ռուսաստանի կենտրոնում՝ մայրաքաղաքներում և համալսարանական քաղաքներում, դէպէ հնագիտութիւնը հետաքրքրութիւն զարգանում է նաև մեր Կովկասում: Թիֆլիզում, համեմատաբար կարճ ժամանակում հիմնուած են երեք հնագիտական ընկերութիւններ՝ սուսաց, վրացոց և հայոց առանձին անուններով: Մօտերքս դրագիտութիւն տարածող ընկերութիւնը 50,000 ռուբլի է նուիրել հայրենիքի հնութիւնների թանգարան շինելու համար: Նկատելի կերպով այսաեղ զարգանում են մաքուր գիտական հարցեր, որոնց բաւականութիւն տալը համալսարանական գիտութիւնը կարող է միայն: Վաղ թէ ուշ ռուս քաղաքակրթական գործը Կովկասում — մէնք հասուատ համազուած

Ենք — կպատկռւի այս երկրում մի համալսարանի շինմամբ և այն ժամանակ Անին, անկատկած, զործնական ուսումնարան կդառնոյ, որ կը առցնի։ Համալսարանի պատմա-վիելլոսովայական բաժնի պարագաներու, որքան որ նա տեղական հոռթիւնները կուռումնաներէ։

Նոյն իսկ այսօր այդ տեսակ ուսումնարանի իրար կարիք է զգացուում Պետերբուրգի Կայսերական համալսարանի ուսումնագների և Արեեւեան լեզուաց Լազարեան ձեմարտնի ուների համար։ Աւելի զօրեղ կարիք զգում են հէնց նոյնպիսի հառաւատութիւնների մէջ իրենք զիստականները։ Եզրուարանութեան ներկայ ժամանակիո իրական ուղղութեան, կովկասեան հոռթիւնների ուսումնասիրութեան համար զիտապէս կտղմակերպած Անին կներկայացնէ նոյնպիսի անհրաժեշտութիւն, — ինչպէս ընտգէտի համար Լաբօրտատորիան։

Գործին նպաստաւոր է նաև պետական հասարակական բուպէն։ Դժուար է գանել քարեյաջող հող, քան Անին, քաղաքականապէս ամրացնելու համար կովկասեան ցեղերի ուսուաց հէտ կապող թելերը։ Ուսւոստանի լուսաւորող խնդիրները այժմ էլ զուգորդուում են և Կովկասի ժողովրդների զիտական-քաղաքական ձկտումներին ձեռք ձեռքի տուած առաջ զնում, համահաւասար, առանց խարսութեան ազգութիւնների։ Յամենայն դէպո այդ կարելի է ասել այն ազգերի համար, որոնք հետաքըրքուում են ազգային կամ Անիի հոռթիւններին ցեղակից հոռթիւնների ուսումնասիրութեամբ։

Վերջապէս, մեռած քաղաքի հէնց աւերակների մէջ է գտնեում ձկողական ոյժը։ Շատ վաղուց Անի քաղաքը գրաւում էր ճանապարհորդների և հոռթիւններ սիոդների, մասնաւոր անհատների և խմբերի, որոնք գնում էին այնտեղ իրենց հետաքըրքութեանը բաւականութիւն տալու։ Բայ կարողութեան պեղումների կարգաւորմամբ և թանգարանի հաստատմամբ, որտեղ այցելուներին բերանացի բացատրութիւններ են տրւում, որոնք երբէմն գաստիօսութեան են փոխուում, ճանապարհորդների քանակը զդալի կերպով բարձրացել է։ Վերջին տարիները միույն Անիի թանգարան յաճախողների թիւը տուժուակներով մի ամսուայ ընթացքում երկու հազարից անցնում է։ Այցելուների շրջանը որպեսի ևս բարձրացաւ։ Գիւղացիներին և մանր քաղաքների բնակիչներին հետեւցին աւելի քաղաքակիւթ զառակարգերի ներկայացուցիչներ և աշակերտներ։ Վերջին ամառը Անին այցելեց Նորին Սրբութիւն Վեհափառաթուղիկուը իւր ամբողջ շքախմբով, որի մէջ նաև տաճկառ-

տանի հայերի կողմից պատգամաւորներ կային: Ճանապարհորդներին և սիրողներին հետեցին մասնագետներ: բազմապատկուցած աշակերտական և ուսունողական էկոկու ըստաները ներքին ռուսականները: Ակում են Անին այցելել և օտարազդի գիտնականները: Հնագիտորեն գեղեցիկ կազմաւերպւած քաղաքում հայրենեաց և օտար գիտնականները կը դանէին հազիւթէ առիթ մի աւելորդ անդամ ես ոչ միայն աեղական հնութիւններն ուսումնասիրելու, այլ և իրենց աջակ տեսնելու և համոզուելու մեր պետութեան կոկական խնամատարութեան մէջ ընակչութեան քաղաքակրթական լուրջ հարցերի և իւր սեպհական հնութեանց յիշատակարանների նկատմամբ:

Ներկայ հանգամանքում մենք այնպէս զրկուած չենք, «ո, ուսուաստանի պատմական պայմանների գասաւորութեան շնորհիւ, այստեղ էլ նպատակ գնենք միայն փառ աւոր կերպով համել միւսներին, յաջողութեամբ միայն օգտուել օտար քաղաքակրթութեան քաջութեան և քաղաքակրթական ձեռնարկութիւնների պատրաստի պտուղներով»:

Աշքի առաջ ունենալով այս բոլորը իմ մէջ միտք յզացաւ Անիում հնագիտական ինստիտուտ հիմնել ուսումնասիրելու, քաղաքի շրջակայ հնութիւնները պահպանելու, և պեղումները կանոնադր կերպով առաջ տանելու համար:

Այս մտքի իրագործման համար մեծամեծ ժախսեր են հարկաւոր: Հայ հասարակութիւնը մինչեւ այժմ օգնում էր հնագիտական դործին և կարելի է հաւատալ, որ ապագայում էլ նա իւր պարտը չի մուանալ: Անկատկած պետութեան վերայ ես պարտք կայ ապահովել պատահականութիւնից այգափոփի անվիճելի կարեւոր գիտական և դասաւուութեան տեսակետից քաղաքակրթական ձեռնարկութեան անընդհատ զարգացումը, և ես ուզում եմ հաւատալ, որ նա իւր կողմից, կազմականէ այն իրենից կախումն ունեցող բալոր միջացներով, նմանապէս, աւելի կամ պակաս նիւթական միջացներով: Այս աւելի ցանկալի և դիւրին է, որովհետեւ այստեղ գործը նոր շպէտք է սկսել, այլ միան շարունակել այն, որի հիմքն արդէն զըրուած է: Անիում կատարւած տռաջին հետազօտութեանց պատիւ ը պատկանում է Կայսերական հնագիտական ընկերութեան, որ իւր հովանաւորութեամբ և բարոյական օգնութեամբ նպաստեց մեր դործի զարգանալուն: Նոյն ընկերութիւնը 1892 — 93 թ.-ին ամբողջ ուսուական Հայեաստանի պարբերական հետազօտութեանը ձեռնարկեց: Այդ աւարիներին Անին մի քանի հարիւր ուուրի բաժին ընկաւ: Կայսերական հնագիտական ըն-

կերութեան միջոցներով գործի վերսկսելուց յետոյ յատկապէս Անիում, 1904-ին՝ առաջին տարին բաց թողին 400 ռ., երկրորդ տարին՝ 300 ռ., երրորդ տարին՝ 400 ռ., և չորրորդ տարին՝ 300 ռ.: Պետերբուրգի արևելեան լեզուների ֆակուլտետի միջոցներից զանազան ժամանակներում ծախսուած է 548 ռ., իսկ հէնց առաջին տարուց սկսած, անդադար ահա հինգ տարի շարունակ, ամարային հնագիտական աշխատութիւնների համար, Անոյ գործի զարգացման նպատակով միաժամանակեայ նուիրատութիւններով, կանոնաւոր մուտքերով հայ ընկերութիւնների, հասարակական հաստատութիւնների կամ մասնաւոր անձանց, նմանապէս իմ գառախօսութիւններից Անիի մասին և ապագրած օգուտից ստացուել է ընդամենայն 28,081 ռ. 3. կոպ., այս գումարի մէջ յատկապէս պիտի շեշտել Ս. Պետերբուրգի հայոց եկեղեցեաց խորհրդի նուերները, որ կանոնաւոր կերպով 1905 ից ստացուած են, եղել է ընդամենայն 15,300 ռ. և 1908 թուի մուտքը, որ մեծացաւ չնորհիւ գառախօսութեանց մինչև 11,495 ռուբլու:

Եթէ հասարակական 28,081 ռ. 31 կ. գումարին աւելացնենք և կայսերական հնագիտական ընկերութիւնից յատկացուածը, կոտանանք՝ 30,024 ռ. 3 կոպ.:

Այս, ընդհանրապէս ասած, ոչ այնքան մեծ գումարով, եթէ բաժանենք ութ ամարային աշխատանքների վերայ և ազքի առաջ ունենանք նորա անկանոն ստացուելը, Անիում յաջողուել է կատարել նշանաւոր պեղումներ՝¹⁾ Ս. Գրիգորի եկեղեցու, որ թանկադին է քարերի վերայ իւր հարուստ քանդակներով և որմանկարի պատառիկներով XIII-դարեց; 2) Խամբուշէնց ցեղի Աստուածամօր եկեղեցու՝ թագաւորների ժամանակից, և 3) Աստուածածնի մի եկեղեցու. 4) բաղնիսներից մէկի, 5) Աշոտ թագաւորի քաղաքի պատերի մէկի և նրան մերձակայ քաղաքամասի. 6) Գագիկ I թագաւորի յայտնի կուլոր տաճարի՝ եկեղեցական ճարտարապետութեան ամենահետաքրքիր տեսակի և նորան շրջապատող հրապարակի. 7) Միջնաւերդի կայսերական պալատի մեծ մասի. 8) Երկու մէծ ընդգարձակ հիւրանոցների, որոնց գլխաւոր մուտքերը զարդարուած են արևելեան ճաշակով հարուստ որմանկարներով. 9) Զորոսիւնանի խորհրդաւոր շինութեան 10) Ս. առաքեալների տաճարի և շրջապատող հրապարակի:

Պեղումներով բացուեց և մաքրուեց բաւական շատ երկար տարածութեան վերայ մի փողոց, որ հաւանականորէն քաղաքի գլխաւոր ճանապարհն է եղել:

Քաղաքից գուրս պեղումներ արուեցին հեթանոսական գերեզմանատան, իսկ շրջակայքում՝ երերոյքի բազիլիկի: Բայց այդ, ձեռնարկուեցին մի քանի փորձնական ճանապարհորդութիւններ, պեղումներով հանդերձ: Այս ըոլոր աշխատանքների համար ձեռք էր բերած բաւականաշափ դօրձիքներ, սայլակներ են: այլ և կազմակերպուած է և սովորեցրուած մշակների բազմաթիւ խմբեր:

Անհրաժեշտ իսերի պահպանութեան համար յարմարեցրուեցաւ սկզբումը լուր մնացած շինութիւններից մէկը, իսկ յետոյ շինուեց և յատուեկ շինութիւն, որին կից գտնուում է գրադարան, պարագամոնց սենեակ և աշխատանաց սենեակ ատազագործական և փականագործական ամենատեսակ գործիքներով:

Անիռում աշխատող հսագէանների համար շինուած է առանձին տուն չորս սենեակից, առանձին նկարչական լաբօրատուրայով:

Միջոցներ են ձեռք առնուած պահպանելու գոնեա շինութիւնները մասնաւոր աւերումից՝ Ա. առարելոց եկեղեցին և գաւիթը, հովուի եկեղեցին և մինարէթը:

Վերջապէս արուած են 700-ից աւելի տեսարանների նկարներ, 150-ից աւելի եւզաններէ և տուշով և բազմաթիւ յատակագծեր և ուրուագծեր վերակալմութեան համար: Ի վերջ սոլորի քաղաքի մանրամասը նկարն է քաշուած: Ես չեմ խօսում պեղումների յիշատակարանների մասին, որոնք գեռ ևս ձեռագիր են:

Անկախ գորանից, մասսամբ այս միջոցներից, մասսամբ Անիր հսութիւնների նախանձախնդիրներին դիմումներով, ցոյց արքուեց ըստ կարելոյն գրամական օգնութիւն նաև ճարտարապետ Թողոս Թողամանեանցին, որի ճարտարապետական գծագրութեանց ալբոմը առանձին կոմմիսիայի բարձր գնահատութեանց արժանացաւ, որ կազմել էր Կայուերական գիտութեան ճեմարանը նախագահութեամբ մշտական քարտուզար Ա. Ֆ. Օլդենբուրգի, նորա անգամներից՝ Ն. Պ. Կոնդոկովի, Կ. Գ. Զալեմանի, Կայուերական հսագէատական Յանձնաժողովի ներկայացաւցիչ Ն. Վ. Ա. Սուլթանովի (այժմ հանգուցեալ), և Կայուերական գեղարուեստի ճեմարանի ներկայացուցիչ Մ. Տ. Պրեօքրաժենովի:

Փորձեր եղան նաև Անիր նիւթերից հրատարակելու, բայց միջոցների սուզ լինելու պատճառով տպագրութիւնը լինում էր առանց սիոտեմի և զանազան հրատարակութեանց մէջ:

Հըտարակչական մասն աւելի է կազում այն պատճառով, որ նորա մէջ անձնական բան շատ կայ, այսինքն համարեա ըոլոր նկատողութիւնները միենոյն ժամանութ աշխատանքն են: Անին հնագիտական ինստիտուտը ի միջի այլոց կծառայէ նկարադրութեան աւելի նպատակայացմաք կազմակերպութեան և, հրատարակութեան աւալով բոլոր հաւաքած նիւթերը, կը դրաւէ մասնագէտ գիտականների՝ այս կամ այն գիտական հարցերի քննութեան համար, այլ և արագայում հարկաւոր մասնագէտներ պատրաստելու համար:

Վերոյգրեսութիւն հիմն վերայ պարտք եմ համարում դիմել Կայսերական գիտութեանց Տեմարանի համագումարին առաջարկելով համակրութեամբ վերաբերութել Անիում հնագիտական ճեմարան հիմնելու մտքին պարբերաբար պեղումներ անելու, ուսումնաօլիցիու և պահպանելու թէ քաղաքի և թէ շրջակայ նիրակ գաւառի հնութիւնները, և ընդունել որպիս ներկայ գործը, նմանագէտ ապագայ Անին հնագիտական ճեմարանը իւր հզօր պաշտպանութեան և կառավարութեանները, ճեռք առնելով հարկաւոր միջոցներ այդ միաբն իրադորձելու համար, այսինքն. ա) Կանոնագրութեան քննութեան և հաստատութեան համար ընտրել մի մասնաժողով, որի մէջ մացնել անպատճառ ճեմարանի իրական անդամ Կայսերական հնագիտական ընկերութեան նախադանի օգնական Վ. Վ. Լատիշենին. բ) Կանոնագրութիւնը մշակելուց յետոյ, ուղարկել օրինական ճանապարհով հաստատելու և միջնորդել տարեկան պետական դրամատնից 5000 ռուբլի նպաստ տալու համար, միենոյն ժամանակ նախօրօք յարաբերութեան մէջ մտնել նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայի հետ, որպէսզի իւր վերայ վերցնէ Անին հնագիտական ընկերութեան ինստիտուտի պատուաւոր նախադանի կոչումը, ստունտով նորանից նմանագէտ համապատասխան նկատողութիւններ կանոնագրութեան լրացման համար յօդուած գիտական գործի: Նաև ստունտ տեղեկութիւն նորին Սրբութեան Վեհափառ Կաթուղիկոսի Ամենայն Հայոց ինստիտուտի պատուաւոր հոգաբարձուի կոչումը ընդունելու մասին. գ) Յանձնաբարել ինձ միաժամանակ յարաբերութեան մէջ մասնել հայ հասարակական հաստատութիւնների և դործիչների հետ, որոնք կարող են յօդուած ապագայ Անին հնագիտական ինստիտուտի պարբերաբար նույիրատութիւններ ստանալու գործի կազմակերպութեանը նպաստել և օգտակար լինել, և բանակցութեանց հետեւնքների մասին զեկուցանել համագումարին:

Երկու նկատողութեւն ևս կանոնազրութեան կազմութեան նկատմամբ։ 1) Մը ագրելի ցանկի մէջ չէ մուժուած դումաների ըաշխումը, որ հաստատապէս համոզուած ենք, ինու իրաբերուէն և ապագայում հասարակական հաստատութեւններով և մասնաւոր անհատներով, ուստի մի քանի ելքց յօդուածները կիթուան անապահով, 2) Ազքի առաջ ունենալով այն օրէնքը, որ Կայսերական հնագիտական Յանձնաժողովն է միայն յատուկ իրաւունք վերապահուած կայսրութեան սահմաններում պետական և հասարակական հողերի վերայ պեղումներ անելը, որ միենայն ժամանակ պարտաւորեցնում է «պեղման ժամանակ» բացուած թանկադին և առանձնապէս գիտական տեսակէտից նշանաւոր առարկաները» ուղարկել նոյն Կայսերական հաստատութեանը «Բարձրագոյն բարեհաճ տնօրինութեան ներկայացնելու համար» (տես. 1889 թ. Մարտի 11-ի Բարձր, Հրամանը) — ևս կանոնազրութեան նախագիծը ներկայացրի Կայսերական հնագիտական Յանձնաժողովին քընութեան, որը և առաջարկելով, իրեն վերաբերող յօդուածներում մի քանի փոփոխութեւն անել, մնացած մեծ ժառի վերաբերութեամբ իւր լիսկատար համականքն արայայտեց մեր ձեռնարկութեան համար։

Թարգմ. Ա. Վ.

Շիրվանջարի վեպերի նիկթը

Այժմ տեսնենք, թէ քաղաքի ընակչի հոգեբանութեան այդ տարբերութեւնը ազգել է ներվանդագէի վէպերի վերայ և նրա յարուցած խնդիրները կապւում են այդ հոգեբանութեան հետ թէ ոչ։

Պատասխանը գրական է։ Ներվանդագէի ամբողջ գրական գործունէութեւնը մի վերին առտիճանի ազատամիտ ընոյթունի։ Իւր բոլոր գրուածքների մէջ հանդէս է դալիս նա իրեւ ըողոքող հասարակութեան մէջ դոյսւթեւն ունեցող այս կամ այն բռնացող սովորութիւն և կարծերի գէմ։ Ամենուրեք խարանում են հսացած կարգերն ու կարծիքները։